ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ք. Երևան, 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (+ 374 10) 44-34-80, (+ 374 60) 37-26-56
Հեռ.՝ (+ 374 10) 44-29-04, (+ 374 60) 37-77-37

Ե 40/11-8022
«27» 11 2025 թ.

«ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ՝
ՏԻԿԻՆ ԱՆՈՒՇ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ
ՀՀ Ք. Երևան, Բաբաջանյան փողոց 39/313
ՀՎՀՀ 01063649
հեռախոս 093 959150
էլ.հասցեն՝ anush-mnacakanyan@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայություն) և «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 26.12.2024թ.-ին կնքվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-3» ծածկագրով գնման պայմանագիր (Այսուհետև՝ Պայմանագիր)՝ «ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կարիքների համար ապրանքներ մատակարարելու վերաբերյալ», որի ընդհանուր գումարը կազմել է 16.467.874,5 ՀՀ դրամ:

Կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-3» ծածկագրով Պայմանագրի շրջանակներում «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել են ապրանքներ, որոնց գումարը կազմել է 6.953.363,26 ՀՀ դրամ:

Պայմանագրի կատարման ընթացքում Կատարողի կողմից թույլ են տրվել պայմանագրի պարտադիր պայմանի խախտում, մասնավորապես. ըստ պայմանագրի՝ «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ն, սույն թվականի 1-ին եռամսյակի ընթացքում պարտավորվել էր մատակարարել դաշտային կարճաթև վերնաշապիկ և տաբատ 750 հատ, դաշտային

կոստյում՝ կեպիով, կիսաբամբակյա, գունաքողարկված, անջրանցիկ կտորից 700 հատ, 2-րդ եռամսյակի ընթացքում պարտավորվել էր մատակարարել կարճաթև վերնաշապիկ 500 հատ, կեպի 650 հատ քանակով, 3-րդ եռամսյակի ընթացքում պարտավորվել էր մատակարարել ականջակալներով ձմեռային գլխարկ 900 հատ, սակայն մինչ օրս վերը նշված ապրանքներից մատակարարվել է միայն՝ դաշտային կարճաթև վերնաշապիկ և տաբատ 750 հատ և դաշտային կոստյում՝ կեպիով, կիսաբամբակյա, գունաքողարկված, անջրանցիկ կտորից 316 հատ: Չմատակարարված ապրանքների ընդհանուր արժեքը կազմում է 9.514.511,24 ՀՀ դրամ

04.10.2025թ.-ին գրությամբ «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ին տեղեկացվել է առ այն, որ վերը նշված ապրանքը ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությանը անհրաժեշտ է պայմանագրով սահմանված ժամկետներում և առաջարկվել է սեղմ ժամկետում՝ տալ պարզաբանում և մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքը, սակայն «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ -ն ուղարկված գրությանն արձագանք չի տրվել:

Արդյունքում՝ «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել պայմանագրային պարտավորությունների խախտում՝ խախտվել է ապրանքների մատակարարման ժամանակացույցը, ուստի ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը՝ **ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությունը 2025թ.-ի նոյեմբերի 27-ին, միակողմանի լուծում է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ի միջև 26.12.2024թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-3» ծածկագրով պայմանագիրը՝ 9.514.511,24 (ինը միլիոն հինգ հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր տասնմեկ ամբողջ քսանչորս հարյուրերորդական) ՀՀ դրամի չափով, ինչպես նաև** պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Տեղեկացնում եմ, որ «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո հինգ բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել **461.292 ՀՀ դրամ**՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 27.11.2025թ. և **59.251** ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

Համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների՝ «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ն, պատվիրատուի ղեկավարի

պատճառաբանված որոշման հիման վրա, պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե Կատարողը չի վճարում պայմանագրի և որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **1.919.000 (մեկ միլիոն ինը հարյուր տասնինը հազար) ՀՀ դրամ**, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **2.878.500 (երկու միլիոն ութ հարյուր յոթանասունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ**, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև **2025թ.-ի դեկտեմբերի 5-ը** ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **1.919.000 ՀՀ դրամ՝** պայմանագրի կատարման ապահովման և **2.878.500 ՀՀ դրամ՝** որակավորման ապահովման գումարները, ընդհանուր **4.797.500 ՀՀ դրամն**, ապա «ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները, ինչպես նաև տույժի և տուգանքի վճարված կտրոնների բնօրինակները, մինչև **2025թ.-ի դեկտեմբերի 5-ը** ներառյալ, ներկայացնել ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կենտրոնական մարմին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ**

Կատարող՝ Տիրան Խաչատրյան,
ՀՀ ԱՆ ՔԿԾ ՆՏԱ բաժին,
Հեռ.՝ 060-37-12-80: